

ՀՏԴ 308

**ԳԻՏԱԶԱՓՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ. ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ԷԴԻՏԱ ԳԶՈՅԱՆ¹, ՇՈՒՇԱՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ^{1,2}

¹ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավրոմատիզացման պրոբլեմների ինստիտուտ

²Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան

**Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական
աջակցությամբ՝ 20TTCG-51013 ծածկագրով գիտական թեմայի
շրջանակներում:**

Չնայած գիտության գնահատման մեջ գիտաչափության լայն կիրառմանը, այն մի շարք խնդիրներ և բարդություններ է առաջացնում հումանիտար և հասարակական գիտություններում (այսուհետև՝ ՀՀԳ): Մոտեցումն այն է, որ ՀՀԳ հրապարակումները չեն կարող չափվել բնական գիտությունների գնահատման չափանիշներով, քանի որ նման մոտեցումը դուրս է թողնում ոլորտի հրապարակումների զգալի մասը:

Հոդվածը ներկայացնում է գիտաչափության մեջ ՀՀԳ խնդիրներն ու առանձնահատկությունները և առկա մոտեցումները, նաև՝ ՀՀԳ վիճակը ՀՀ-ում՝ ըստ Web of Science շտեմարանի:

Բանալի բառեր. գիտաչափություն, միջազգային գիտական շտեմարաններ, գիտական հրապարակումներ, հղումներ, հղման ցուցիչներ:

**Գիտաչափական հետազոտությունների կիրառումը գիտության
գնահատման մեջ**

Գիտության քաղաքականության մեջ գիտաչափական/մատենաչափական գործիքներն օգտագործվում են գիտության համակարգերի կատարողականության, արդյունավետության և մրցունակության գնահատման համար՝ մակրո (տարածաշրջանային, ազգային), մեզո (ինստիտուցիոնալ) և միկրո (անհատական) մակարդակներում: Չնայած օբյեկտիվ և սուբյեկտիվ քննադատության՝ գիտաչափության կիրառումը գիտական տարբեր ուղղությունների, կազմակերպությունների, առանձին ստորաբաժանումների, գիտնականների գնահատման գործում ավելի է կարևորվում:

Գիտաչափության զարգացման մեջ մեծ դերակատարություն ունեցավ Յուզին Գարֆիլդի կողմից Science Citation Index-ի¹ (գիտական հղման ցուցիչ) ստեղծումը, ինչը հնարավորություն տվեց վիճակագրական ուսումնասիրություններ կատարել գիտական գրականության մեծ ընտրանքի վրա: Գիտության ապագա զարգացումները կանխատեսելու առումով մեծ նշանակություն ունեցան գիտության չափման ցուցիչների ստեղծումն ու կիրառումը, որոնք վերաբերում են գիտության սոցիալական ուղղվածությանը, հատկապես հետազոտողների քանակին, գիտության վրա ծախսվող գումարի չափին, գիտական խմբերի արդյունավետությանը, ամսագրերի, գրքերի, կոնֆերանսների դերին և այլն:

Չնայած ներկայումս գիտաչափական մեթոդների լայն կիրառության, դրանք նույնպես ունեն որոշակի սահմանափակումներ. սահմանափակ ծածկույթ (միջազգային գիտատեղեկատվական շտեմարանները չեն ծածկում հրատարակվող բոլոր ամսագրերը, գրքերը և այլն), որոշ հրապարակումների տեսակների բացակայություն (հիմնականում ամսագրերում տպագրվող նյութերն են), ամսագրերի անվանումների փոփոխություն, նույն ձևով գրվող անուններ, համահեղինակների թիվ և աշխատանքի բաշխումը նրանց միջև և այլն: Գիտաչափության համար բավական լուրջ խնդիր են նաև հղումների հետ կապված հարցերը. ավելորդ և ընտրովի հղումներ (երբ հղումը կատարվում է հատուկ որևէ աշխատանքի, կամ արհեստականորեն), երկրորդային հղումներ (երբ հղումը արվում է այլ աշխատանքի մեջ արված հղմանը), բացասական (երբ տվյալ աշխատանքը հղվում է կատարված սխալը կամ ոչ ճիշտ հետազոտությունը մատնանշելու համար) կամ սխալ հղումներ (երբ հղվող աշխատանքը կամ թեմատիկ չի համապատասխանում, կամ հղումը ամբողջովին սխալ է) և ինքնահղումներ:

Միաժամանակ, ներկայում որոշ փոփոխություններ են տեղի ունենում գիտական հաղորդակցության ձևերի նախընտրությունների հարցում: համացանցը նոր հնարավորություններ է ստեղծում հետազոտողների համար նյութեր որոնելու, իրենց հետազոտության արդյունքները տեղադրելու (օրինակ, անձնական և կազմակերպությունների վեբէջեր, գիտական տարբեր հարթակներ՝ Academia.edu, ResearchGate և այլն) առումով: Եվ

¹ Science Citation Index-ը (SCI) գիտական հղման ցուցիչ է, որը ստեղծել է Եվգեն Գարֆիլդը և մշակել Գիտական տեղեկատվության ինստիտուտը (Institute of Scientific Information): Այն պաշտոնապես գործարկվել է 1964 թ. և այժմ պատկանում է Clarivate Analytics-ին (նախկինում՝ Thomson Reuters-ին): Գիտական հղման ցուցիչի առավել ընդարձակ տարբերակը (Science Citation Index Expanded) ընդգրկում է 178 գիտական բնագավառների ավելի քան 9200 առաջատար ամսագրեր՝ սկսած 1900 թ. մինչ օրս: Համակարգում ընդգրկված ամսագրերը համարվում են առաջատար՝ ընտրության խիստ և բարդ գործընթացի պատճառով:

այսօր վերոմետրիկան, ալտիմետրիկան նոր, հետաքրքիր հնարավորություններ է ստեղծում գնահատողական և քարտեզագրական գիտաչափական վերլուծությունների համար [1, p. 338, 342]:

Գիտաչափական հետազոտությունների կիրառումը հումանիտար և հասարակական գիտություններում

Չնայած գիտաչափական հետազոտությունները կիրառվում են ինչպես բնական, այնպես էլ հումանիտար և հասարակական գիտություններում, սակայն, գիտաչափության կիրառումն առավել տարածված և բնականոն է բնական գիտությունների համար [2], [3], [4]: Որոշ ուսումնասիրողներ հումանիտար և հասարակական գիտությունները համարում են գիտաչափական հետազոտությունների աքիլեսյան գարշապարը [5, p. 271]:

ՀՀԳ ոլորտում գիտաչափական մեթոդների դժվար կիրառումը կապված է գիտելիքի ստեղծման և տարածման ՀՀԳ ոլորտի առանձնահատկությունների հետ՝ հետազոտական առարկայի, մեթոդոլոգիայի, կառուցվածքի և գիտական հաղորդակցության, հղումների պրակտիկայի և այլ տարբերություններով [6, p. 499], [7]:

Կարելի է առանձնացնել ՀՀԳ ոլորտի հետևյալ առանձնահատկությունները. ՀՀԳ հաղորդակցության ձևերը, գիտելիքի տարածման ավելի ընդարձակ դաշտը, հղումների հետ կապված առանձնահատկությունները, ՀՀԳ հետազոտական խնդիրների, հետազոտական առարկայի հաճախ բավականին տեղային բնույթը, ՀՀԳ հրապարակումների լեզուն, թիրախային ընթերցողների սահմանափակ խումբը, համահեղինակությամբ աշխատանքների սահմանափակ թիվը, միջազգային համագործակցությունների քիչ քանակը, գիտաչափական շտեմարանների սահմանափակ ընտրությունը և այլն: Այժմ առավել հանգամանալից անդրադառնանք վերոնշյալ առանձնահատկություններից մի քանիսին:

ՀՀԳ հաղորդակցության ձևերը

ՀՀԳ գիտելիքի տարածման դաշտն ավելի լայն է, քան բնական գիտություններինը: Կախված ոլորտից՝ հոդվածները կարող են հարաբերականորեն ավելի քիչ լինել մյուս հրապարակումների համեմատ (օրինակ՝ գրքերի): ՀՀԳ ոլորտում կատարվող հետազոտական աշխատանքների արդյունքները հանրայնացվում են առավել տարատեսակ ձևերով, իսկ մենագրությունները, գիտաժողովների նյութերը հաճախ ավելի մեծ դեր են խաղում, քան ամսագրերի հոդվածները: Հիքսի [3] հաշվարկով գրքերը կազմում են հասարակական գիտությունների հրապարակումների 40–60%-ը և ունեն 40% հղումներ: Սակայն, գիտական հաղորդակցության ոչ բոլոր ձևերն են ինդեքսավորվում, իսկ հոդվածն այն հիմնական միավորն է, որը ինդեքսավորվում է:

Որոշ հետազոտողներ պնդում են, որ ՀՀԳ ոլորտի գիտնականները պատկանում են մի շարք մրցակցող պարադիգմների, ինչը խթան է հետազոտության՝ գրքի ձևով հրապարակման համար [3, p. 194-195], քանի որ գրքերը ենթակա չեն նմանատիպ գրաքննության, ինչպես ամսագրի հոդվածները, և ՀՀԳ ոլորտի գիտնականներն իրենց հետազոտությունները որպես գիրք հրատարակելը տեսնում են որպես այլընտրանք և գերակայող պարադիգմներից դուրս տեղ զբաղեցնելու միջոց [3, p. 195]: Ըստ Հիքսի [3, p. 197], բնական գիտությունների լավագույն հետազոտությունները հրապարակվում են հոդվածներում, սակայն ՀՀԳ լավագույն հետազոտությունները կարող են տպագրվել նաև գրքերում:

Քլեմենթսը և ուրիշները [8] տարբեր գիտական դերեր են նախանշում գրքի և հոդվածի համար, առնվազն գոնե գիտության սոցիոլոգիայի տեսանկյունից: Ըստ հեղինակների՝ գրքերն ավելի մեծ ազդեցություն ունեն տվյալ գիտական բնագավառից դուրս և հիմնականում հասու են ավելի լայն շրջանակի մարդկանց: Իսկ հոդվածներն անդրադառնում են ավելի ժամանակակից խնդիրների և ավելի հեշտությամբ են կարողանում իրենց տեղը գրավել տվյալ գիտական բնագավառում:

ՀՀԳ որոշ ճյուղերում կան նաև հրատարակման այլ ձևեր: Դրանք պաշտոնական (կառավարական) հրատարակություններն են և կազմակերպությունների ներքին զեկույցները, որոնք սովորաբար տարածվում են ոչ պաշտոնական և ոչ համակարգված ձևով [9], [10]: Նման հրապարակումներից ոմանք ունեն ISBN և բավական լայն տարածում ունեն: Ավելացել են նաև հետազոտական խմբերի կողմից իրենց՝ աշխատանքային վիճակում գտնվող նյութերի տեղադրումը համացանցում, քանի որ դրանք ավելի շատ տեղեկատվություն են պարունակում, քան դրանց հիման վրա գրված վերջնական հոդվածները: Սակայն, նման հրապարակումների հիմնական նպատակը տեղեկատվության տրամադրումն է, այլ ոչ թե գիտության զարգացումը:

ՀՀԳ ոլորտում հաղորդակցության ձևերի ուսումնասիրություններ կատարվել են տարբեր երկրներում: Օրինակ, Նիդեռլանդներում կատարված հետազոտությունները արձանագրել են, որ ՀՀԳ վեց ոլորտների համար ուսումնասիրված ամսագրերի հոդվածները եղել են գլխավորը՝ կազմելով 35-57%, որին հաջորդել են գրքերի գլուխները (21-34%): Սակայն, ավելի լավ հասկանալու համար ոլորտի առանձնահատկությունը, նշենք, որ, օրինակ, ընդհանուր լեզվաբանության մեջ հրապարակումների 35% -ը հոդվածներ են, 34%՝ գրքի գլուխներ [11, p. 10]: Այսինքն՝ գրքերում տպագրությունները մեծ նշանակություն ունեն ոլորտի գնահատման համար: Դանիայում իրականացված նմանատիպ հետազոտությունը փաստում է, որ

հասարակական գիտություններում դանիացի գիտնականների տպագրությունների միայն մեկ քառորդն են ամսագրերի հոդվածներ [11, p. 10], [12]:

Միաժամանակ, պետք է փաստել, որ ՀՀԳ ոլորտը ևս արագ փոխվում է, և ոլորտի տարբեր ճյուղերի զարգացումն ընթանում է տարբեր ձևերով: Օրինակ տնտեսագիտության, հոգեբանության, քաղաքագիտության ոլորտներում ամսագրերի դերը բավական արագ է աճում, իսկ, մյուս կողմից, պատմության, գրականության ոլորտում ամսագրերի դերը շարունակում է նվազել:

Իդեալական պայմաններում, ՀՀԳ գիտաչափական հետազոտությունները պետք է ընդգրկի տեղեկատվություն հոդվածների, գրքերի և գիտական հաղորդակցության այլ ձևերի մասին, որոնք ընդունված են ոլորտում: Ցավոք, դեռևս նմանատիպ ընդրկունության գիտատեղեկատվական շտեմարան չի ստեղծվել:

ՀՀԳ հաղորդակցությունների լեզուն և դրանց տեղային նշանակությունը

Եթե բնական գիտությունների ուսումնասիրության խնդիրներն ավելի համաշխարհային բնույթ ունեն, ապա ՀՀԳ ոլորտի խնդիրներն երբեմն կարող են ավելի տեղային լինել: Այսպես՝ ֆիզիկայի կամ կենսաբանության ոլորտի հետազոտությունները կարող են իրականացվել և կիրառվել աշխարհի յուրաքանչյուր ծայրում նույն արդյունքներով:

Բնական գիտություններում ոլորտում արդյունքների տարածումը միջազգային ուղղվածությամբ է, իսկ առավել տարածված հրապարակման ձևը՝ գիտական հոդվածը հիմնականում անգլերեն լեզվով և միջազգային ամսագրերում: ՀՀԳ հետազոտությունները ավելի հաճախ վերաբերում են տեղային և տարածաշրջանային խնդիրներին, տարբեր երկրներում կարող են ունենալ տարբեր արդյունքներ, արդյունքների տարածումը շատ հաճախ տեղային լեզուներով ամսագրերում են [2], [3], [4], [13], [14]:

Ըստ որոշ հեղինակների՝ հասարակական գիտությունների մեծ մասը կարելի է բնութագրել որպես «համեմատաբար երիտասարդ ուղղություններ, որոնք որպես համակարգված գիտական ուղղություններ հազվադեպ են կազմակերպված» [7, p. 10]: ՀՀԳ մասնատված են, քանի որ չկան միջազգային ստանդարտներ հասկացությունների սահմանման համար, օգտագործվող տերմինները, հասկացությունները տարբերվում են ըստ տարածաշրջանների և փոփոխվում են ժամանակի ընթացքում [6, pp. 500-518]:

Սրանից հետևում է, որ ՀՀԳ հետազոտական առարկան ավելի հատուկ է տվյալ մշակույթին [3], [4]: Շատ դեպքերում, ՀՀԳ հասկացություններն ու առարկաները կարելի է հասկանալ միայն տվյալ մշակույթի լեզվով, որի շրջանակներում այն ձևավորվել է: Հետևաբար, ՀՀԳ ոլորտի հետազոտողներն ավելի հաճախ տպագրվում են իրենց մայրենի լեզուներով և ազգային ամսագրերում:

Մյուս կողմից պետք է փաստել, որ միջազգային գիտական հայտնի շտեմարանները բավական քիչ են ծածկում ազգային հրատարակությունները: Թեև վերջին տարիներին փորձ արվեց ուղղել այդ բացը՝ ներառելով ազգային մի շարք շտեմարաններ (ռուսական, կորեական, չինական), սակայն սա շատ չնչին տոկոս է ընդհանուրի մեջ:

ՀՀԳ ոլորտում գիտաբեղեկատվական շտեմարանների սահմանափակ լինելը

Գիտաչափական ուսումնասիրությունները հիմնականում հիմնվում են Web of Science (WoS) և Scopus շտեմարանների վրա, որոնք սահմանափակ կիրառություն ունեն ՀՀԳ ոլորտի համար: Այսպես, Web of Science շտեմարանը չի հաշվարկում ազդեցության գործոն (Impact Factor) հումանիտար ոլորտի ամսագրերի համար: ՀՀԳ ոլորտի բացը ծածկելու համար ստեղծվել են տեղային և համաշխարհային նախաձեռնություններ (օրինակ՝ Excellence in Research for Australia, European Reference Index for the Humanities և այլն): Ոլորտի բացերը լրացնելու համար որոշ հետազոտողներ առաջարկում են որպես այլընտրանք կիրառել Libcitations (library citations, հաշվարկվում է, թե քանի գրադարան ունի տվյալ գրքից) [15], Google Scholar, Google Books [16], Book Citation Index [17], տվյալ հաստատության տեղեկատվական համակարգերը [18] և այլն:

Գիտաչափական շտեմարանների հետ կապված մեկ այլ խնդիր է Science Citation Index–ի (SCI) ծածկույթի լեզվական կողմնակալությունը. ամսագրերը հիմնականում անգլերեն լեզվով են, իսկ ազգային ամսագրերի զգալի մասը (որոշ երկրների դեպքում սա կարող է լինել 100%) բացակայում են համակարգից:

ՀՀԳ հղումների պրակտիկան

ՀՀԳ ոլորտում առկա են դժվարություններ՝ կապված ոլորտի հղումների առանձնահատկությունների հետ: ՀՀԳ ոլորտում հղումները արվում են նաև արխիվային նյութերի, գրքերի, հրապարակումների այլ տեսակների վրա, որոնք դուրս են գիտաչափական ուսումնասիրությունների տիրույթից: Սակայն, ՀՀԳ որոշ ճյուղեր իրենց վարքով բավական նման են բնական և կյանքի մասին գիտություններին. օրինակ, լեզվաբանության մեջ ընդունված է պարբերաբար հրատարակվել և հղել բարձր ազդեցության գործոն ունեցող ամսագրերի հոդվածներին [19]:

Մյուս առանձնահատկությունը պայմանավորված է այսպես կոչված հղումների տարիքով: Ի տարբերություն բնական գիտությունների, որտեղ փոփոխությունները շատ արագ են տեղի ունենում, ՀՀԳ ոլորտի հրապարակումները ուշ են «ծերանում», այսինքն՝ իրենց արդիականությունը պահպանում են բավական երկար ժամանակ: Հետևաբար, հղումներ ստանում

են հրապարակվելուց հետո դեռ երկար ժամանակ: Մինդեռ, գիտաչափության մեջ ամենաշատ կիրառվող ցուցիչներից մեկը՝ ազդեցության գործոնը, հաշվվում է վերջին երկու տարվա հղումների հիման վրա:


ՀՀ ոլորտում փորձ է արվում ընդլայնել հղումների վերլուծությունը՝ առանց տարիների սահմանափակման, գրքերի գիտաչափական մշակմամբ, հակակշիռ մետրիկաների ստեղծմամբ և այլն:

Հումանիտար և հասարակական գիտությունները ՀՀ-ում ըստ Web of Science շտեմարանի

Չնայած ՀՀ ոլորտում հայաստանյան ամսագրերում տպագրվող հոդվածների մեծ թվի¹ դեռ շատ քիչ թիվ են կազմում միջազգային առաջատար գիտատեղեկատվական համակարգերում ինդեքսավորված ամսագրերում ՀՀ ոլորտի հոդվածները: WOS գիտատեղեկատվական շտեմարանի InCites համակարգում 1991-2019 թթ. Հայաստանի բոլոր հրապարակումների (19.758) միայն մոտ 4.8% են կազմում ՀՀ ոլորտի հրապարակումները: **Գծապատկեր 1**-ում պատկերված է WOS գիտատեղեկատվական շտեմարանի InCites համակարգում ՀՀ բոլոր տեսակի հրապարակումների աճն ըստ տարիների՝ սկսած 1991 թվականից: Թեև հրապարակումների թվի աճն ակնհայտ է, սակայն համակարգում առկա է ՀՀ ոլորտի միայն 949 հրապարակում: Հրապարակումների զգալի մասը՝ մոտ 45%-ը, տպագրված են Q1 մակարդակի միջազգային ամսագրերում²: Հրապարակումներից մոտ 22% միջազգային համագործակցության արդյունք են, այսինքն՝ համատեղ հրապարակումներ են:

¹ ՀՀ-ում ներկայումս տպագրվող մոտ 120 գիտական ամսագրերից 56%-ը ՀՀ ոլորտի ամսագրեր են:

² Ներկայումս գոյություն ունի չորս քառորդ՝ Q1, Q2, Q3 և Q4: Q1 մակարդակը զբաղեցնում են տվյալ համակարգի ցուցակի ամսագրերի լավագույն 25% -ը, Q2-ը զբաղեցնում են 25-ից 50% խմբի մեջ մտնող ամսագրերը, Q3-ը զբաղեցնում են 50-ից 75% խմբի ամսագրերը, իսկ Q4-ը՝ 75-ից 100% խմբի ամսագրերը:




Գծապատկեր 1. Հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառների հրապարակումներն ըստ տարիների (1991-2019, WOS, InCites, բոլոր տեսակի հրապարակումներ, տվյալները քաղհանված են 27.07.2020թ.)

Բավական քիչ են վերոնշյալ հրապարակումների ստացած հղումները. 949 հրապարակումների միայն 31%-ն է ստացել հղում, ինչը վկայում է տվյալ գիտական բնագավառում հրապարակումների թույլ ազդեցության մասին:

Նշված հրապարակումների մեծ մասը պատմության ոլորտից են, որին հաջորդում է փիլիսոփայությունը, ապա՝ քաղաքագիտությունը, կրթություն և կրթական հետազոտությունները, տնտեսագիտությունը, հասարակական գիտություններ և հնագիտությունը¹ (տե՛ս **Գծապատկեր 2**):


¹ Գիտական բնագավառները վերցված են InCites համակարգից, որն էլ բաժանումն անում է՝ ելնելով այն ամսագրի ոլորտից, որտեղ տպագրվել է տվյալ հրապարակումը:



Գծապատկեր 2. Հրապարակումներն ըստ գիտական ոլորտների¹

¹ Գիտության բնագավառների բաժանումները վերցված են WoS շտեմարանից: Քանի որ դրանց անվանումների մեծ մասը չկա հայկական իրականության մեջ, իսկ թարգմանությունները բավական արհեստական են ստացվում, այս նկարում գիտության բնագավառները թողնված են անգլերեն լեզվով:


ՀՀԳ ոլորտում քիչ են նաև միջազգային համագործակցությունները: Հոդվածների ճնշող մեծամասնությունը մեկ հեղինակի կատարված հետազոտություններ են: 226 հրապարակում ներհայաստանյան համագործակցության արդյունք է: Իսկ արտասահմանյան գործընկերների հետ համահեղինակությամբ համակարգում առկա է 291 հրապարակում, որտեղ առաջին տեղում ԱՄՆ, ապա՝ Մեծ Բրիտանիան, որին հաջորդում է Ռուսաստանը (մանրամասն տե՛ս **Գծապատկեր 3**): Ինչպես երևում է, համագործակցությունը հիմնականում արևմտյան երկրների հետ է, բացառությամբ Ռուսաստանի և Իսրայելի:



Գծապատկեր 3. Հասարակական գիտություններ I (ընդհանուր, տարածաշրջանային և համայնքային խնդիրներ), հասարակական գիտություններ II (տնտեսագիտություն, քաղաքագիտություն և իրավունք), հումանիտար գիտությունների¹ հրապարակումներն՝ ըստ միջազգային համագործակցության

¹ Գիտական բնագավառների դասակարգումը կատարվել է ըստ Գլանզելի և Շուբերտի մեթոդաբանության [20]:

Ինչ վերաբերում է հրապարակումների տեսակներին, ապա InCites համակարգում ՀՀ ոլորտի հայաստանյան հրապարակումների զգալի մասը հողվածներ են (67%), որին հաջորդում են գիտաժողովներին, աշխատաժողովներին և այլ մասնագիտական հանդիպումներին ներկայացված ամփոփումները, ապա՝ կոնֆերանսներին ներկայացված զեկույցները, գրախոսությունները, խմբագրականները և այլն: Զարմանալիորեն փոքր թիվ են կազմում գրքի գլուխները (մոտ 1%), որը ոլորտի համար շատ ցածր ցուցանիշ է (տե՛ս **Գծապատկեր 4**):



Գծապատկեր 4. Հասարակական գիտություններ I (ընդհանուր, տարածաշրջանային և համայնքային խնդիրներ), հասարակական գիտություններ II (տնտեսագիտություն, քաղաքագիտություն և իրավունք), հումանիտար գիտությունների հրապարակումներն ըստ հրապարակման տեսակի

Այսպիսով՝ ՀՀ ոլորտի հայաստանյան հրապարակումների բացարձակ մեծամասնությունը տպագրվում է Հայաստանում՝ տեղական ամսագրերում և գրքերում: Մի կողմ թողնելով ՀՀ ոլորտի հետ կապված մի շարք օբյեկտիվ պատճառները՝ միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում հրապարակումները շատ փոքր թիվ են կազմում, ինչը ենթադրում է, որ Հայաստանում ՀՀ ոլորտում արվող ուսումնասիրությունները դուրս են մնում միջազգային գիտությունից: Ներկայումս ինչպես պետական՝ Գիտության կոմիտեի, այնպես էլ անհատական՝ խմբագրությունների մակարդակում փորձ է արվում հայաստանյան որոշ ամսագրեր ինդեքսավորել միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում: Նշենք, որ Հայաստանում հրատարակվող ամսագրերից միայն վեցն են ինդեքսավորված նման հարթակներում, որոնցից միայն մեկն է ՀՀ բնագավառի: Հույս կա, որ այս գործընթացի արդյունքում որոշ ՀՀ ոլորտի ամսագրեր կհայտնվեն միջազգային շտեմարաններում: Նաև ներկայումս

ակտիվորեն խրախուսվում (անգամ պարտադրվում) են հրապարակումները միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ինդեքսավորված ամսագրերում: Վստահաբար, այս երկու գործընթացների իրականացումը կհանգեցնի ոլորտի միջազգային հրապարակումների աճին՝ հայաստանյան գիտության ճյուղը միավորելով միջազգային գիտության ծառին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. **Thelwall M.** (2016), *Webometrics and Altmetrics: Home Birth vs. Hospital Birth*, In *Theories of Informetrics and Scholarly Communication*, Berlin: De Gruyter Saur.

2. **Glänzel W., Schoepflin U.** (1999), *A bibliometric study of reference literature in the sciences and social sciences*, *Information Processing and Management*, 35, pp. 31-44.

3. **Hicks D.** (1999), *The difficulty of achieving full coverage of international social science literature and the bibliometric consequences*. *Scientometrics*. 44(2), pp. 193-215.

4. **Hicks D.** (2004), *The Four Literatures of Social Science*. In *Handbook of Quantitative Science and Technology Research*. Ed.: Henk Moed. Dordrecht: Kluwer Academic.

5. **Gumpenberger C., Sorz J., Wieland M., Gorraiz J.** (2016), *Humanities and social sciences in the bibliometric spotlight – Research output analysis at the University of Vienna and considerations for increasing visibility*, *Research Evaluation* 25 (3), pp. 271-278.

6. **Moed H., Luwel M., Nederhof A.** (2002), *Towards Research Performance in the Humanities*, *Library Trends* 50(3), pp. 498-520.

7. **Moed, H.** (2005), *Citation analysis in research evaluation*. Dordrecht: Springer.

8. **Clemens E., Powell W., McIlwaine K., Okamoto D.** (1995), *Careers in Print: Books, Journals, and Scholarly Reputations*. *The American Journal of Sociology*, 101(2), pp. 433-494.

9. **Grayson L. and Gomersall A.** (2003), *A Difficult Business: Finding the Evidence for Social Science Reviews*, ESRC UK Centre for Evidence Based Policy and Practice: Working Paper 19, at <https://www.kcl.ac.uk/sspp/departments/politiceconomy/research/cep/public/papers/assets/wp19.pdf>, accessed 19.04.2021.

10. **Larivière, V., Godin, B.** (2001), Profil de la production scientifique du Service canadien des forêts (SCF), Rapport soumis au Service canadien des forêts, p. 24.
11. **Archambault E., Gagné E.V.** (2004) Science-Metrix Final Report - The Use of Bibliometrics in the Social Sciences and Humanities, at https://www.science-metrix.com/pdf/SM_2004_008_SSHRC_Bibliometrics_Social_Science.pdf, accessed 19.04.2021.
12. **Andersen H.** (2000), Influence and Reputation in The Social Sciences - How Much Do Researchers Agree? *Journal of Documentation* 56(6), pp. 674-692.
13. **Sooryamoorthy R.** (2020), *Scientometrics for the Humanities and Social Sciences*, Routledge, 170 p.
14. **Nederhof A.** (2006) Bibliometric monitoring of research performance in the Social Sciences and the Humanities: A Review, *Scientometrics* 66, pp. 81–100.
15. **White, H. D., Boell, S. K., Yu, H., Davis, M., Wilson, C. S., & Cole, F. T. H.** (2009). *Libcitations: A measure for comparative assessment of book publications in the humanities and social sciences*. *Journal of the American Society for Information Science and Technology*, 60(6), 1083–1096. doi:10.1002/asi.21045
16. **Kousha K. and Thelwall M.** (2009), Google book search: Citation analysis for social science and the humanities, *Journal of the American Society for Information Science and Technology Research Article* 60 (8), pp. 1537-1549.
17. **Gorraiz J., Purnell Ph., and Glänzel W.** (2013) Opportunities for and limitations of the Book Citation Index *Journal of the American Society for Information Science and Technology* 64 (7), pp. 1388-1398.
18. **Ossenblok T., Engels T., Sivertsen G.** (2012), The representation of the social sciences and humanities in the Web of Science: a comparison of publication patterns and incentive structures in Flanders and Norway (2005-9), *Researchevaluation* 21(4), pp. 280-290.
19. **Bonaccorsi A., Daraio C., Fantoni S., Folli V., Leonetti M. and Ruocco G.** (2017), Do social sciences and humanities behave like life and hard sciences? *Scientometrics* 112, Issue 1, pp 607–653.
20. **Glänzel G., Schubert A.** (2003), A New Classification Scheme of Science Fields and Subfields Designed for Scientometric Evaluation Purposes, *Scientometrics* 56, pp. 357-367.

НАУКОМЕТРИЯ В СОЦИАЛЬНЫХ И ГУМАНИТАРНЫХ НАУКАХ: ПРОБЛЕМЫ И ОСОБЕННОСТИ

ЭДИТА ГЗОЯН¹, ШУШАНИК САРГСЯН^{1,2}

¹Институт проблем информатики и автоматизации НАН РА, Центр анализа и мониторинга научной информации

²Ереванский государственный медицинский университет им. Мхитара Гераци

Исследование выполнено при финансовой поддержке Комитета по науке РА в рамках научного проекта № 20TTCG-5I013.

Несмотря на широкое распространение наукометрии в оценке науки, она создает ряд проблем в гуманитарных и общественных науках (ГОН). Они заключаются в том, что публикации в ГОН нельзя оценивать по тем же критериям, что и в естественных науках, поскольку такой подход упускает значительную часть публикаций в этой области.

В статье представлены проблемы, особенности и существующие подходы для ГОН в наукометрических исследованиях, а также состояние ГОН в Армении согласно базе данных Web of Science.

Ключевые слова: наукометрия, международные научные базы данных, научные публикации, цитирование, индексы цитирования.

SCIENTOMETRICS IN SOCIAL SCIENCES AND HUMANITIES: PROBLEMS AND PECULIARITIES

EDITA GZOYAN¹, SHUSHANIK SARGSYAN^{1, 2}

¹Institute for Informatics and Automation Problems, National Academy of Sciences of the Republic of Armenia

²Yerevan State Medical University After Mkhitar Heratsi

The work was supported by the Science Committee of RA, in the frames of the research project № 20TTCG-5I013.

Despite the widespread use of scientometrics in the evaluation of science, it poses a number of problems in humanities and social sciences (SSH). The approach is that SSH publications cannot be measured by the same criteria as natural sciences as such an approach omits a significant portion of the field's publications.

The article presents the problems, peculiarities, and existing approaches for SSH in scientometric research and the state of SSH in Armenia according to the Web of Science database.

Keywords: scientometrics, international scientific databases, scientific publications, citations, citation indexes.

*Ներկայացվել է խմբագրություն 04.05.2021
Երաշխավորվել է րպագրության 21.05.2021*